ՊԱՅՄԱՆԱԳԻՐ

ԹԻՎ ՓԴ 02-23

Հայաստանի Հանրապետություն,
ք. Երևան

04.09.2023թ.

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» հասարակական կազմակերպությունը, ի դեմս Գլխավոր քարտուղար Արթուր Ազարյանի, ով գործում է կազմակերպության կանոնադրության հիման վրա (այսուհետ՝ **ՀՖՖ**), մի կողմից, և

Վեղի համայնքը, ի դեմս համայնքի ղեկավարի առաջին տեղակալ Ռաֆայել Հակոբյանի (այսուհետ՝ **Համայնք**), մյուս կողմից, միասին անվանվելով նաև Կողմեր,

Հաշվի առնելով ՀՖՖ կողմից իրականացվող «Մասսայական ֆուտբոլի ենթակառուցվածքների զարգացում» ծրագիրը (այսուհետ՝ Ծրագիր),

Հաշվի առնելով Համայնքի ցանկությունը մասնակցելու ծրագրին,

Հաշվի առնելով սույն պայմանագրի ստորագրումից հետո 50 (հիսուն) օրվա ընթացքում Ծրագրի իրականացման շրջանակներում կառուցվող խաղադաշտի ամբողջ երկայնքով երկաթյա ցանկապատ կառուցելու համար ՀՖՖ կողմից տրամադրված գծագրին և նախահաշվին համաձայն համաֆինանսավորման տեսքով Համայնքի կողմից ՀՖՖ-ին 2.957.908,8 ՀՀ դրամ գումարի, որը չի ներառում ՀՀ օրենսդրությամբ կիրառելի հարկերը և պարտադիր այլ վճարները, փոխանցման պատրաստակամությունը,

կնքեցին սույն պայմանագիրը (այսուհետ՝ **Պայմանագիր**) հետևյալի մասին.

I. Պայմանագրի առարկան

1. ՀՖՖ-ն պարտավորվում է Պայմանագրով նախատեսված ժամկետում և պայմաններով բարեգործական նպատակներով մարզ Արարատ, համայնք Վեղի, Վեղի քաղաքային բնակավայրի Թումանյան 17/2 հասցեում գտնվող, համայնքային սեփականություն հանդիսացող հասարակական կառուցապատման 0,1874 հա հողամասում կառուցել արհեստական խոտածածկով, 22մ x 42մ (խաղային՝ 20մ x 40մ) չափի ֆուտբոլի խաղադաշտ (այսուհետ՝ Խաղադաշտ) և անհատույց նվիրաբերել Համայնքին:

2. Համայնքը հավաստում է, որ ունի անհրաժեշտ իրավունքներն ու թույլտվությունները Պայմանագրի 1-ին կետում նշված տարածքում Պայմանագրի առարկան կազմող գործողությունների կատարման համաձայնության տրամադրման համար:

II. Կողմերի իրավունքները և պարտականությունները

3. Կողմերը պարտավորվում են Պայմանագրով ստանձնած իրենց պարտականությունները կատարել սեփական միջոցների հաշվին՝ բարեգործական նկատառումներից ելնելով, անձամբ կամ երրորդ անձանց միջոցով:

4. Կողմերն իրավունք ունեն ցանկացած ժամանակ ստուգել Պայմանագրի առարկա կազմող հասցեում իրականացվող աշխատանքների ընթացքը և որակը՝ առանց միջամտելու միմյանց գործունեությանը:

5. Կողմերը պարտավոր են Պայմանագրի շրջանակներում համագործակցել միմյանց հետ՝ Պայմանագրի առարկա կազմող աշխատանքները կատարելու համար:

6. Համայնքը պարտավոր է Պայմանագրի ստորագրումից հետո 50 (հիսուն) օրվա ընթացքում ՀՖՖ-ին փոխանցել՝ խաղադաշտի ամբողջ երկայնքով երկաթյա ցանկապատ կառուցելու համար համաֆինանսավորման տեսքով 2.957.908,8 ՀՀ դրամ գումարը, որը չի ներառում ՀՀ օրենսդրությամբ կիրառելի հարկերը և պարտադիր այլ վճարները: Նշված գումարը Պայմանագրով սահմանված ժամկետում Համայնքի կողմից չվճարելու դեպքում ՀՖՖ-ն իրավունք ունի միակողմանի լուծել Պայմանագիրը:

7. Համայնքը պարտավոր է Խաղադաշտը ՀՖՖ կողմից կառուցելուց և հանձնելուց հետո ապահովել.

7.1. Խաղադաշտի պատշաճ շահագործումը և պահպանումը՝ համաձայն ՀՖՖ կողմից տրամադրված և Պայմանագրի անբաժանելի մասը կազմող հավելված 1-ում սահմանված ուղեցույցի,

7.2. Խաղադաշտի հասանելիությունը համայնքի բնակիչների համար,

7.3. ՀՖՖ կողմից պահանջ ներկայացնելու դեպքում, Խաղադաշտը անհատույց տրամադրել ՀՖՖ-ին՝ ՀՖՖ հովանու ներքո անցկացվող միջոցառումների անցկացման համար:

8. Կողմերը պատավորվում են Պայմանագիրը ստորագրելուց հետո 1 (մեկ) տարվա ընթացքում ավարտել Պայմանագրով նախատեսված Խաղադաշտի կառուցումը և արդյունքը հանձնել հետագա շահագործման համար: Ընդունող կողմը իրավունք չունի որևէ պատճառաբանությամբ հրաժարվել խաղադաշտն ընդունելուց: Այն դեպքում, երբ ընդունող կողմը հրաժարվում է ստորագրել հանձնման-ընդունման ակտը, ապա ՀՖՖ Խաղադաշտի կառուցման վերաբերյալ Կապալառու ընկերության հետ կատարողական և (կամ) ավարտական ակտի ստորագրումից 10 օրվա ընթացքում դաշտը համարվում է պատշաճ ընդունված Համայնքի կողմից:

9. Եթե Համայնքը նվիրաբերված գույքն օգտագործել է դրա նշանակությանն անհամապատասխան և/կամ ցանկացած ձևով արատավորել է ՀՖՖ համբավը, ապա ՀՖՖ-ն իրավունք ունի պահանջել կատարված ծախսերի փոխհատուցում:

III. Կողմերի պատասխանատվությունը

10. Պայմանագրով նախատեսված պարտավորությունների չկատարման կամ ոչ պատշաճ կատարման համար Կողմերը պատասխանատվություն են կրում Պայմանագրով և ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

IV. Անհաղթահարելի ուժի ազդեցությունը (Ֆորս-Մաժոր)

11. Պայմանագրով և Պայմանագրի հիման վրա կնքված համաձայնագրերով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է Պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում Պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

V. Եզրափակիչ դրույթներ

12. Պայմանագիրն ուժի մեջ է մտնում դրա երկկողմ ստորագրման պահից և գործում է 20 (քսան) տարի ժամկետով:

13. Պայմանագրում Կողմերի համաձայնությամբ կարող են կատարվել փոփոխություններ և լրացումներ, որոնք օրինական են միայն այն դեպքում, եթե դրանք կատարված են գրավոր և ստորագրված կամ այլ կերպ հաստատված են Կողմերի կողմից, որը կհանդիսանա Պայմանագրի անբաժանելի մասը:

14. Պայմանագրի հետ կապված վեճերը և տարաձայնությունները լուծվում են բանակցությունների միջոցով, իսկ 10-օրյա ժամկետում համաձայնության չգալու դեպքում՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

15. Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում Կողմերի օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտները կամ կրած վնասներն են:

16. Եթե Պայմանագրում բառը և/կամ հասկացությունը նշված է եզակի թվով, ապա Պայմանագրի պայմանները տարածվում են նաև այդ բառի և/կամ հասկացության հոգնակիի վրա և հակառակը:

17. Պայմանագրի շրջանակներում ծանուցումը համարվում է պատշաճ, եթե հանձնվել է Կողմերին առձեռն (ստացման մասին ստորագրությամբ և ստացման օրվա և ժամի նշմամբ) կամ առաքվել է Պայմանագրում նշված Կողմերի հասցեներին՝ պատվիրված նամակով՝ ստացման մասին ծանուցմամբ (ծանուցման օր է համարվում ստացման մասին փոստային ծանուցման մեջ նշված ստացման օրը) կամ ուղարկվել էլեկտրոնային փոստի միջոցով՝ Կողմի՝ Պայմանագրում նշված էլեկտրոնային հասցեին (ծանուցման օր է համարվում էլեկտրոնային նամակը Կողմի էլեկտրոնային փոստին ուղարկման հաջորդ օրը): Կողմերն իրավունք ունեն ծանուցում ուղարկելիս օգտագործել ինչպես սույն կետում նշված միջոցներից մեկը, այնպես էլ միաժամանակ մի քանիսը:

18. Պայմանագրից ծագած կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

19. Պայմանագիրը կնքվում է երեք օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է պայմանագրի մեկ օրինակ:

VI. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

«Հայաստանի ֆուտբոլի ֆեդերացիա» ՀԿ	Վեդու համայնքապետարան
ՀՎՀՀ՝ 02566915	ՀՎՀՀ՝ 04241258
հասցե՝ ՀՀ, ք. Երևան, Խանջյան 27	հասցե՝ ՀՀ, Արարատի մարզ, ք. Վեդի, Թումանյան 6
էլ. փոստ՝ ffa@ffa.am, legal@ffa.am	էլ. փոստ՝ **vedimunicipality@gmail.com**
բանկ՝ «Ամերիաբանկ» ՓԲԸ	ՀՀ Ֆինանսների նախարարություն
հ/հ՝ 1570059720290300	հ/հ՝ 900422102252
Գլխավոր քարտուղար՝ Արթուր Ազարյան	Համայնքի ղեկավարի առաջին տեղակալ՝ Ռաֆայել Հակոբյան
Ստորագրություն՝	Ստորագրություն՝